Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 4-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«04» մայիսի 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌՑԱՆՑ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» և Հայաստանի Հանրապետության Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի թիվ 63 որոշումը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ՝ սահմանում է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բարձրագույն մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների առցանց ամփոփիչ ատեստավորման կանոնները:
2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը, Գավառի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կազմավորվում է յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:
4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ, նշանակում է ռեկտորը՝ համապատասխան ոլորտի Համալսարանի կամ գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և (կամ) կոչում ունեցող մասնագետներից:
5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն Համալսարանի աշխատակից չհանդիսացող անձինք:
6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների

ներկայացուցիչները, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով Համալսարանի աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքի ժամանակացույցը համաձայնեցվում է հանձնաժողովների նախագահների հետ, հաստատվում ռեկտորի կողմից և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն 10 օր առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել շրջանավարտների պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը տվյալ մասնագիտության կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ,

4) ներկայացնել հաշվետվություն:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը քննարկվում է համապատասխան ֆակուլտետի խորհրդում, ապա նաև Համալսարանի գիտական խորհրդում: Ամփոփիչ ատեստավորումից հետո Համալսարանը ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

11. Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով ուսուցումը, կուտակել են համապատասխան կրեդիտներ և ուսման վարձավճարի գծով չունեն ֆինանսական պարտավորություններ: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է ռեկտորի հրամանով:

12. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի ներկայությունը պարտադիր է:

13. Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է առցանց, մեկ փուլով՝ հետևյալ կարգով.

1) առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի շրջանավարտներն առցանց պաշտպանում են ավարտական աշխատանքը,
2) առկա ուսուցման ֆակուլտետների մագիստրատուրայի շրջանավարտներն առցանց պաշտպանում են մագիստրոսական թեզը:

14. Առցանց պաշտպանությունները կազմակերպվում են հետևյալ կանոններով.
1) խմբի բոլոր ուսանողները նախատեսված ժամին միանում են հանձնաժողովին՝ ‹‹ԶՈՒՄ›› ծրագրով, նախապես տրամադրված մուտքաբառով և գաղտնաբառով,
2) պաշտպանությունն անցկացվում է՝ ըստ դեկանատի կողմից ներկայացված ցուցակներում ուսանողների հերթական համարների,
3) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը,
4) ուսանողը ամփոփիչ առցանց ատեստավորմանը մասնակցելու համար պարտավոր է՝
4. 1)ունենալ իր անուն ազգանունով ‹‹ԶՈՒՄ›› համացանցային ծրագրով ներբեռնված համակարգիչ, անխափան և որակյալ համացանցային կապ,
4. 2) սենյակում լինել միայնակ,
4. 3) չունենալ հեռախոս, տեխնիկական այլ միջոց,
4. 4)տեսանելի ձևով ցուցադրել իր անձնագիրը և ստուգարքային գրքույկը,
4. 5) նստել համակարգչից այնպիսի հեռավորության վրա, որ քննության ողջ ընթացքում համակարգչի տեսախցիկով տեսանելի լինի սեղանի մակերեսը, ուսանողի դեմքը, ձեռքերը,
4. 6) պատասխանի ընթացքում ի ցույց դնի իր համակարգչի էկրանը,
4. 7) պաշտպանության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվությունը:

15. Սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված կանոններից առնվազն մեկի խախտման դեպքում ուսանողի ամփոփիչ ատեստավորումը դադարեցվում է, ուսանողը համարվում է չատեստավորված, անկախց նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

16. Պաշտպանության ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է:

17. Մագիստրոսական թեզի կամ ավարտական աշխատանքի բովանդակությունը բանավոր ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է 20 րոպե: Պատասխանի ընթացքում շրջանավարտը պետք է ի ցույց դնի իր համակարգչի էկրանը՝ ներկայացնելով աշխատանքի սահիկաշարը:

18. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին հատկացվում է մինչև 20 րոպե՝ շրջանավարտին հարցեր տալու և պատասխաններ ստանալու համար:

20. Ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ ըստ Համալսարանում գործող գնահատման 100 միավորանոց համակարգի:

19. Գնահատականը ձևավորվում է հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականների միջինից՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի և

արձանագրվում ամփոփ տեղեկագրում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

21.Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ տվյալ խմբի պաշտպանության վերջում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահի կողմից՝ ողջ խմբի առցանց մասնակցությամբ:

22. Հիմք ընդունելով սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության դրական (բավարար, լավ, գերազանց) արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու ու նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին և ներկայացնում է հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

23. Բացասական (անբավարար) արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում, և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

24. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 տոկոսը:

25. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

26. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

27. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) կարող է բողոքարկվել առցանց և լրացուցիչ քննարկվել համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների՝

1) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ պարզաբանումներ գնահատականի վերաբերյալ,

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,

3) շրջանավարտը ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկման վերաբերյալ հանձնաժողովի նախագահին դիմում է ամփոփիչ ատեստավորման արդյունքները

հրապարակելուց անմիջապես հետո: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը քննարկումը կազմակերպում է նույն օրը:

28. Բողոքարկման հանձնաժողովը նախապես կազմավորվում է ռեկտորի հրամանով, որի կազմում մտնում են.

1) քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող վարչական աշխատակից,
2) Համալսարանի ուսանողական խորհրդի ներկայացուցիչ:

29. Բողոքարկման հանձնաժողովը՝ բողոքարկող շրջանավարտի առցանց ներկայությամբ դիտում է տեսաձայնագրությունը, քննարկում և բաց քվեարկությամբ,հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) գնահատականը թողնել անփոփոխ կամ
2) գնահատականը բարձրացնել:

30. Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Որոշմանը համաձայն չլինելու դեպքում բողոքարկման հանձնաժողովի անդամը ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

31. Նախորդ ուսումնական տարիներին ամփոփիչ ատեստավորմանը չմասնակցած կամ անբավարար ստացած ուսանողների համար ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգին համապատասխան:

32. 2019-2020 ուսումնական տարվա առցանց ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին իր ցանկությամբ տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք: Տեղեկանքը տրվում է անվճար, Համալսարանի ռեկտորին շրջանավարտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված 1

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԱՌԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Գավառի պետական համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների **ավ**արտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության /այսուհետ՝ պաշտպանության/ արդյունքները գնահատվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների քվեարկության միջոցով:
2. Պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ Համալսարանում գործող գնահատման 100-միավորանոց համակարգին, թվանշաններին և տառային նշանակումներին համապատասխան.

Գնահատականը	**Տառային նշանակումը**	**Թվանշանը**	**Միավորը**
Գերազանց	A + A A -	4,0 4,0 3,7	95-100 87-94 81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0

3. Ավարտական աշխատանքի գնահատման չափանիշներն են՝
   1) Աշխատանքի արդիականությունը, նորույթը՝ 10 միավոր.
   2) Բովանդակությունը՝ 30 միավոր.
   3) Համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ 30 միավոր.
   4) Ներկայացումը, պաշտպանությունը՝ 30 միավոր.
   5) ԸՆդամենը՝ 100 միավոր:
4. Մագիստրոսկան թեզի գնահատման չափանիշներն են՝

1) Թեզի արդիականությունը, նորույթը՝ 10 միավոր.
2) Բովանդակությունը՝ 35 միավոր.
3) Համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ 35 միավոր.
4) Ներկայացումը, պաշտպանությունը՝ 20 միավոր.
5) ԸՆդամենը՝ 100 միավոր:

5. Ավարտական աշխատանք /մագիստրոսական թեզ/ պաշտպանած ուսանողին գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ‹‹ԶՈՒՄ›› համացանցային ծրագրով մասնակցել են և հետևել են տվյալ ուսանողի կողմից պաշտպանության ամբողջ ընթացքին:

6. Ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի և անդամների նշանակած գնահատականների միջինից:

Հավելված 2

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ
2019-2020 **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

Ուսուցման եղանակը՝----------
Ֆակուլտետը՝----------
Մասնագիտական կրթական ծրագիրը՝----------
Կրեդիտների քանակը՝------
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի /ԱԱՀ/ նախագահ և անդամներ.
1. Նախագահ՝----------
2. Անդամ՝ ----------
3. Անդամ՝ ----------
Օրը, ամիսը, տարեթիվը՝----------

Հ/Հ	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Արդյունարար գնահատականը (միավորը՝ 0-100)	Տառային նշանակումը (C- -ից A+), թվային նշանակումը (1,7-ից 4,0)	ԱԱՀ նախագահի և անդամների ստորագրությունները
1.				1. նախագահի ստորագրությունը ----------
				2. հանձնաժողովի անդամների ստորագրությունները----------
				3.----------
2.				1.
				2.
				3.
3.				1.
				2.
				3.
4.				1.
				2.
				3.

Դեկան՝ ----------
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝----------

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
2019-2020 **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

Ուսուցման եղանակը՝----------
Ֆակուլտետը՝----------
Մասնագիտական կրթական ծրագիրը՝----------
Կրեդիտների քանակը՝------
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի /ԱԱՀ/ նախագահ և անդամներ.
1. Նախագահ՝----------
2. Անդամ՝----------
3. Անդամ ----------
Օրը, ամիսը, տարեթիվը՝----------

ՀՀ	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Արդյունարար գնահատականը (միավորը՝ 0-100)	Տառային նշանակումը (C- -ից A+), թվային նշանակումը (1,7-ից 4,0)	ԱԱՀ նախագահի և անդամների ստորագրությունները
1.				1. նախագահի ստորագրությունը ----------
				2. հանձնաժողովի անդամների ստորագրությունները----------
				3.----------
2.				1.
				2.
				3.
3.				1.
				2.
				3.
4.				1.
				2.
				3.

Դեկան՝ ----------
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝----------

Հավելված 3

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2019-2020 **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«____» _____ 2020 թ.

Ֆակուլտետ՝
Կրթական աստիճան՝
Մասնագիտական կրթական ծրագիր՝
Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների թիվը՝
Ամփոփիչ ատեստավորումն առցանց անցած շրջանավարտների թիվը-------
Գնահատականները.
«գերազանց» (81-100)_____
«լավ» (61-80)_____
«բավարար» (40-60)_____
«անբավարար»_____
«չներկայացած»_____
Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականների թիվը _____:
Հանձնաժողովի դիտարկումները շրջանավարտների պատրաստման որակի վերաբերյալ.

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման մասին.

_____
_____
_____
_____
_____

_____
_____
_____
_____
_____

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ (ստորագրություն)

Հավելված 4

Հարգելի՛ պարոն /տիկին/----,

Գրախոսության է ուղարկվում Գավառի պետական համալսարանի -----ֆակուլտետի ---- ամբիոնի 20---20-- ուսումնական տարվա բակալավրիատի /մագիստրատուրայի/ 4-րդ /2-րդ/ կուրսի ուսանող _____ -ի «_____» թեմայով աշխատանքը /թեզը/:

Խնդրում ենք աշխատանքի /թեզի/ գրախոսի կարծիքը տրամադրել 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

ԳՊՀ --------- ամբիոնի վարիչ

Ամսաթիվ, տարեթիվ